Կարգապահական գործ թիվ ԿԳ-22014

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 129-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/85-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Ռուբեն Հակոբյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Կարեն Մեժլումյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով:

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի:

Քննության առնելով փաստաբան Կարեն Հովհաննեսի Թումանյանի (արտոնագիր թիվ 649) **(այսուհետ՝ նաև Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը **(այսուհետ նաև՝ Դիմող կամ Բանկ)** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ փաստաբան Կարեն Թումանյանը ներկայացնում է քաղաքացի Գևորգ Հրաչիկի Հակոբյանի շահերը մի շարք քաղաքացիական և վարչական գործերով, որոնց մասնակցում է նաև Դիմողը: Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) վարույթում է գտնվում թիվ ԼԴ/6158/02/21 քաղաքացիական գործն ըստ Բանկի հայցի ընդդեմ պատասխանող Գևորգ Հակոբյանի Բանկին պատկանող ք.Վանաձոր Մոսկովյան 27/1 հասցեում գտնվող անշարժ գույքից ապօրինի տիրապետողին վտարելու պահանջի մասին:

Դիմողը հայտնել է, որ իր և Գևորգ Հակոբյանի միջև 07.10.2019թ.-ին կքվել է

նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: Նշված պայմանագիրը Բանկի կողմից միակողմանի լուծվել է, Գևորգ Հակոբյանի օգտագործման իրավունքի գրանցումը դադարեցվել է, ինչի մասին է վկայում ՀՀ Կադաստրի կոմիտեի 23.04.2020թ.-ի տեղեկանքը: Ըստ Դիմողի՝ ինքը 24.03.2020թ.-ին Գևորգ Հակոբյանին ուղարկել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը լուծելու մասին թիվ 22-77 ծանուցագիրը, որտեղ նշվել է, որ Բանկը հրաժարվում է պայմանագրից և պայմանագիրը լուծվում է Գևորգ Հակոբյանի կողմից ծանուցումը ստանալուց հետո 3-րդ օրվանից սկսած:

Դիմողը նշել է, որ Գևորգ Հակոբյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի կողմից 07.03.2022թ. ներկայացվել է հակընդդեմ հայցադիմում՝ ըստ հակընդդեմ հայցի Գևորգ Հակոբյանի ընդդեմ Բանկի՝ ***Բանկի և Գևորգ Հակոբյանի միջև 07.10.2019թ. կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի Բանկի կողմից միակողմանի լուծումը (ծանուցագիրը) անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք Գևորգ Հակոբյանի օգտագործման իրավունքը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 27/1 հասցեում գտնվող խորտկարանի, ջրավազանի, պարսպի և հողամասի նկատմամբ վերականգնելու պահանջների***: Ներկայացվել է նաև միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու խնդրանքի մասին: Հակընդդեմ հայցի և միջնորդության ***հիմքում դրվել է այն, որ Բանկի կողմից պայմանագրից հրաժարվելու մասին թիվ 22-77 ծանուցագիրը չի եղել հայցվորի տիրապետության տակ, իսկ դա առաջին անգամ հայցվորի ներկայացուցիչ Կարեն Թումանյանը ստացել է 03.03.2022թ. կայացված դատական նիստին***: Ծանուցագիրը Հայցվորի տիրապետության տակ չլինելու մասին Կարեն Թումանյանը նաև հայտարարել է դատական նիստերի ընթացքում:

Դիմողը հայտնել է, որ Դատարանի 10.03.2022թ. կայացվել է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու խնդրանքի մասին միջնորդությունը մերժելու և հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին: Որոշման հիմքում դրվել է այն, որ հակընդդեմ հայցը ներկայացվել է ապացուցման պարտականությունը բաշխելու որոշումը կայացնելուց հետո, իսկ դատավարական ժամկետը վերականգնելու հիմքերը բացակայում են:

Դիմողը նշել է, որ ***Գևորգ Հակոբյանի փաստաբան Կարեն Թումանյանի տիրապետության տակ դեռևս 17.03.2021թ. եղել է Կադաստրի կոմիտեի թիվ ԱՏ-17032021-06-1079 տեղեկանքը, որը տրամադրվել է Գևորգ Հակոբյանի ներկայացուցիչ փաստաբան Կարեն Թումանյանին: Նշված տեղեկանքը Կարեն Թումանյանը ներկայացրել է թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործով ներկայացված հայցին կից վարչական դատարանին: Կարեն Թումանյանը թե Դատարանին տրամադրել է ակնհայտ կեղծ տեղեկատվություն այն մասին***, որ ***Բանկի կողմից Գևորգ Հակոբյանին ուղարկված թիվ 22-77 ծանուցագիրը հասանելի չի եղել նրանց համար, Կարեն Թումանյանը այն ստացել է միայն 03.03.2022թ. կայացված դատական նիստին***, ինչի պատճառով հակընդդեմ հայցը ներկայացվել է գործով ապացուցման բեռը բաշխելու որոշում կայացնելուց հետո: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, Կարեն Թումանյանը թիվ 22-77 ծանուցագիրը

ստացել էր դեռևս 17.03.2021թ. ՀՀ Կադաստրի կոմիտեից:

Դիմողը հավելել է, որ փաստաբան Կարեն Թումանյանի կողմից դատարանին հայտնած այն տեղեկությունը, որ մինչև 03.03.2022թ. թիվ 22-77 ծանուցագիրը իրենց համար հասանելի չի եղել, ինչի հիման վրա խնդրել են բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնել, իրականությանը չի համապատասխանում, ինչը հիմնավորվում է Կադաստրի կոմիտեի 17.03.2021թ. թիվ ԱՏ-17032021-06-1079 տեղեկանքով, որին կից Կարեն Թումանյանին տրամադրվել է Բանկի կողմից 24.03.2020թ. ուղարկված թիվ 22-77 ծանուցագիրը:

Դիմողը որպես դիմումում նկարագրված հանգամանքների ապացույց կից ներկայացրել է թիվ ԱԴ/6158/02/21 քաղաքացիական գործով ներկայացված հակընդդեմ հայցի պատճենը, ՀՀ Կադաստրի կոմիտեի թիվ ԱՏ-17032021-06-1079 տեղեկանքի պատճենը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված նույն առարկայով և հիմքով հայցի պատճենը և կայքից քաղված, Բանկի կողմից ուղարկված թիվ 22-77 ծանուցագրի և հետադարձ փոստային ծանուցման պատճենները, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.03.2022թ. կայացրած հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին որոշման պատճենը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.04.2022թ. որոշման պատճենը:

Դիմողը խնդրել է փաստաբան Կարեն Թումանյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 16.06.2022թ. թիվ 132-Ա/ԿԳ-22014 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ հարուցվել է ***կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, ինչպես նաև*** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** ***4.3-րդ կետի խախտման հատկանիշներով:***

20.06.2022թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Թադևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաներիցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործի վարույթի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է կարգապահական վարույթ հարուցելու իր դիմումով հայտնած դիրքորոշումը:

Միաժամանակ, 29.06.2022թ.-ին Դիմողին ուղարկվել է ծանուցագիր (հրավեր)՝ լրացուցիչ բացատրություն տալու համար, մասնավորապես Բանկի կողմից 24.03.2020թ.-ին Գևորգ Հակոբյանին ուղարկված թիվ 22-77 ծանուցագրի, ինչպես նաև՝ այն վերջինիս հանձնման փաստը հաստատող փոստային առաքման

հետադարձ ծանուցման անդորրագրի՝ Պատասխանողին հասանելի լինելու, դրա առկայության մասին թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործի շրջանակներում տեղեկացված լինելու վերաբերյալ:

Դիմողը՝ 06.07.2022թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացել է լրացուցիչ գրավոր բացատրություն, որով, ըստ էության, պնդել է դիմումով ներկայացված պահանջը, այն հիմնավորող փաստերը, և միաժամանակ հավելել, որ դեռևս ՀՀ վարչական դատարանի վարույթում քննվող թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործի քննության ընթացքում Կարեն Թումանյանին հասանելի են եղել Բանկի կողմից 24.03.2020թ.-ին ուղարկված թիվ 22-77 ծանուցագիրը, ինչպես նաև՝ այն Գևորգ Հակոբյանին հանձնման փաստը հաստատող փոստային առաքման հետադարձ ծանուցման անդորրագիրը:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի վարույթի ընթացքում Պատասխանողը 28.06.22թ.ին Պալատ ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր առկա չեն:

Պատասխանողը հղում է կատարել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է ազնվորեն ն բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով՝ հավելելով, որ Բանկի կողմից ներկայացված դիմումում նշված դատավարական գործողությունները իրականացրել է իր վստահորդի շահերի պաշտպանության նպատակով:

Պատասխանողը հավելել է, որ իր կողմից ներկայացված հայցերը և միջնորդություններն ենթակա են գնահատման իրավասու դատարանի կողմից, իսկ Դիմողը կարող է դրանց դեմ առարկություններ ներկայացնել դատարան:

Պատասխանողի պնդմամբ, Դիմողի կողմից վկայակոչված հակընդդեմ հայցադիմումում ինքը նշել է, որ 2022 թվականի մարտի 03-ին քաղաքացիական գործով դատական նիստի ընթացքում իրեն, որպես Գևորգ Հակոբյանի ներկայացուցիչ, որպես ապացույց տրամադրվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը լուծելու մասին ծանուցագիրը և նամակը ստանալու վերաբերյալ փոստային ծանուցագրի պատճենը:

Պատասխանողը նշել է, որ ծանուցագրի պատճենը ստանալուց հետո իր համար պարզ է դարձել, որ առկա է պայմանագրի միակողմանի լուծումը (ծանուցագիրը) անվավեր ճանաչելու հիմք, քանի որ փոստային ծանուցագրում դրվել է անհայտ անձի ստորագրություն՝ նշվել է «Հակոբյան» և «07/04»: Հակընդդեմ հայցը ներկայացնելու ժամկետը վերականգնելու միջնորդությունը ներկայացվել է փոստային (հետադարձ) ծանուցագիրն ուշ ստանալու հիմքով:

Պատասխանողը հավելել է, որ չի ժխտում այն հանգամանքը, որ 2021 թվականի մարտ ամսին Կադաստրի կոմիտեից ստացել է «Ծանուցագիր» վերտառությամբ փաստաթուղթ, սակայն Կադաստրային գործում առկա չի եղել որևէ ապացույց, որով կհավաստվեր, որ Բանկը այդ փաստաթուղթը ուղարկել է Գևորգ Հակոբյանին

(օրինակ փոստային կտրոն) կամ, որ Գևորգ Հակոբյանը ստացել է այդ փաստաթուղթը (հետադարձ փոստային ծանուցագիր): «Ծանուցագիրը» վերտառությամբ փաստաթուղթը չստանալու և փոստային հետադարձ ծանուցագրի ստորագրությունը իրեն չպատկանելու վերաբերյալ տեղեկություններն իրեն հայտնել է Գևորգ Հակոբյանը:

Պատասխանողը հայտնել է, որ նույնիսկ եթե իր ներկայացրած դատավարական փաստաթղթերում առաջացել են որոշակի հակասություններ «ծանուցում» և «ծանուցումը ստանալու վերաբերյալ փոսանային ծառայության կտրոն (հետադարձ ծանուցագիր)» բառակապակցությունների հետ կապված, դրանում իր կողմից որևէ դիտավորություն չի եղել և Դիմողի որևէ իրավունք չի խախտվել:

Պատասխանողը նաև հավելել է, որ Բանկի ներկայացուցիչ փաստաբանը պետք է բարեխիղճ և համբերատար ներկայացնի իր վստահորդի շահերը և փորձի իրավական հաջողություններ ունենալ դատարանում, քանի որ Բանկի և իր վստահորդի վեճն իրավական վեճ է, որը պետք է հանգուցալուծվի դատարաններում՝ նշելով, որ իրականացնում է իր վստահորդի իրավական պաշտպանությունը այդ նպատակով և ոչ թե անձնական հետաքրքրությունների բավարարման համար:

Միաժամանակ, 29.06.2022թ-ին Պատասխանողին ուղարկվել է ծանուցագրեր (հրավեր)՝ լրացուցիչ բացատրություն տալու համար, մասնավորապես՝ Բանկի կողմից 24.03.2020թ. Գևորգ Հակոբյանին ուղարկված թիվ 22-77 ծանուցագրի, ինչպես նաև՝ դրա հանձնման փաստը հաստատող փոստային առաքման հետադարձ ծանուցման անդորրագրի՝ Պատասխանողին հասանելի լինելու, դրա առկայության մասին թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործի շրջանակներում տեղեկացված լինելու վերաբերյալ:

Պատասխանողը 30.06.2022թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է լրացուցիչ գրավոր բացատրություն, որով ըստ էության պնդել է իր առարկություններում ներկայացված հիմքերն ու հիմնավորումները և միաժամանակ հավելել, որ Դատարանին ներկայացրած փաստաթղթերում նկատի է ունեցել Բանկի կողմից 24.03.2020թ. ուղարկված թիվ 22-77 ծանուցագրի փոստային առաքման հետադարձ ծանուցման անդորրագիրը, իսկ նշված փաստաթղթերը թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործի քննության ընթացքում իրեն հասանելի լինելու մասին լրացուցիչ դիրքորոշում չի հայտնել: Ավելին՝ լրացուցիչ առարկություն վերտառությամբ բացատրությամբ կրկին շեշտել է, որ պայմանագիրը լուծելու մասին ծանուցագիրը իր վստահորդին ուղարկելու վերաբերյալ ապացույցը՝ փոստային ծառայության հետադարձ ծանուցագիրը ստացել է 03.03.2022թ-ին տեղի ունեցած դատական նիստում:

27.12.2022թ.-ին ներկայացրած գրավոր բացատրությամբ Պատասխանողը հայտնել է, որ ընդունում է, որ 2021 թվականի մարտ ամսին Կադաստրի կոմիտեից ստացել է թիվ 22-77 ծանուցագիրը, սակայն չի ստացել այն իր վստահորդին ուղարկելը հավաստող փոստային հետադարձ ծանուցագիրը: «Ծանուցագիր» վերտառությամբ փաստաթուղթն իր տիրապետության տակ չլինելու վերաբերյալ դատարանին տեղեկություններ չի հայտնել ոչ թե դիտավորյալ՝ իրականությունը խողաթյուրելու նպատակով, այլ Հակընդդեմ հայցադիմումում պետք է գրվեր

«ծանուցագիրը» չստանալու վերաբերյալ «հետադարձ ծանուցագիր» չստանալ եզրույթ: Ինչն է իր վստահորդի կողմից վիճարկվել է ի սկզբանե: Շփոթված գրառվել է «Ծանուցագիր»:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

13.07.2022թ.-ին կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Թադևոսյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Դիմողն առարկություն չի ներկայացրել:

Պատասխանողը Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ 25.07.2022թ.-ին ներկայացրել է գրավոր առարկություն՝ կից փաստաթղթերի պատճեններով, որում իր անհամաձայնությունն է հայտնել եզրակացությամբ որպես հաստատված գնահատված որոշ հանգամանքների հետ, մասնավորապես՝ Պատասխանողը հայտնել է, որ 29.06.2022թ.-ի բացատրությամբ արդեն նշել է, որ Գործի վերաբերյալ Բանկը դիրքորոշում է ներկայացրել Վարչական դատարանին 27.01.2022թ.-ին, որի պատճենն ինքը ստացել է 31.01.2022թ.-ին, որին կից Բանկը որևէ փաստաթուղթ իրեն չի ուղարկել: Նույն բացատրությամբ նշել և ապացույց է ներկայացրել, որ ինքը թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործով դատական նիստերին չի ներկայացել, ուստի չէր կարող տեղյակ լինել Բանկի կողմից Դատարանին նիստերի ժամանակ ներկայացրած փաստաթղթերին:

15.07.2022թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 27.12.2022թ-ին, ժամը՝ 20:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Պատասխանողը ՀՀ վարչական դատարանի վարույթում քննվող թիվ ՎԴ/2547/05/21 վարչական գործի քննության ընթացքում տեղեկացված է եղել կամ առնվազն պետք է տեղեկացված լիներ գործում առկա և Դիմողի բողոքի հիմք համդիսացող 2020 թվականի մարտի 24-ի թիվ 22-77 ծանուցագրի գոյության մասին:

2. Պատասխանողի կողմից թիվ ԼԴ/6158/02/21 քաղաքացիական գործով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված, 2022 թվականի մարտի 07-ով թվագրված, «Պայմանագրի միակողմանի լուծումը (ծանուցագիրը) անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելուի պահանջի մասին» հակընդդեմ հայցադիմումի և դրան կից՝ «Բաց թողնված ժամկետտը հարգելի համարելու և վերականգնելու խնդրանքի մասին» միջնորդության մեջ նշված տեղեկատվությունն այն մասին, որ Պատասխանողը չի ստացել «Ծանուցագիրը», չի համապատասխանում իրականությանը:

3. Պատասխանողը չի ստացել (նրան հասանելի չի եղել) ՀՀ կադաստրի կոմիտեից թիվ 22-77 ծանուցագիրն իր վստահորդին ուղարկելը հավաստող փոստային առաքման հետադարձ ծանուցման անդորրագիրը, քանի որ այդ փաստաթուղթը ներկայացնելու և հետազոտելու դատական նիստին Պատասխանողը ներկա չի եղել, դատական նիստն անցկացվել է իր բացակայությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարեն Թումանյանը փաստաբան է հանդիսանում 09.11.2006թ-ից, տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Կարեն Թումանյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, Կանոնագրքի 4.3 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է*

կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծիկանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը երբեք չպետք է գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնի դատարանին:*

Կարգի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Այս համատեքստում, Խորհուրդը գտնում է, որ թեև Պատասխանողի կողմից քաղաքացիական գործով դատարան ներկայացված, 2022 թվականի մարտի 07-ով թվագրված հակընդդեմ հայցադիմումի և դրան կից միջնորդության մեջ նշված տեղեկատվությունն այն մասին, որ Պատասխանողը չի ստացել «Ծանուցագիրը», չի համապատասխանում իրականությանը, այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ Պատասխանողը ներկա չի գտնվել այն դատական նիստին, որի ժամանակ ներկայացվել և հետազոտվել է թիվ 22-77 ծանուցագիրն իր վստահորդին ուղարկելը հավաստող փոստային առաքման հետադարձ ծանուցման անդորրագիրը, ուստի Պատասխանողին հասանելի չի եղել (չի ստացել) այդ անդորրագիրը: Այս համատեքստում Խորհրդն արժանահավատ է համարում Պատասխանողի այն դիրքորոշումը, որ «Ծանուցագիր» վերտառությամբ փաստաթուղթն իր տիրապետության տակ չլինելու վերաբերյալ դատարանին ոչ թե գիտակցաբար ներկայացրել է կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն, այլ հակընդդեմ հայցադիմումում և դրան կից միջնորդության մեջ «Հետադարձ ծանուցման անդորրագիրը չստանալու» փոխարեն նշել է, որ չի ստացել «Ծանուցագիրը»:

Վերոնշյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին Դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կհերքեն Պատասխանողի ներկայացրած հիմնավորումները և կվկայեն փաստաբանի կողմից կարգապահական խախտման կատարման մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի հիմնավորվել փաստաբան Կարեն Թումանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, ուստի նշված պատճառաբանությամբ կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարեն Հովհաննեսի Թումանյանի (արտոնագիր թիվ 649) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, Կանոնագրքի 4.3 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-22014 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնումսույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Ռուբեն Հակոբյան

27 դեկտեմբերի 2022թ.
թիվ ԿԳ/85-Ա
ք. Երևան